ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2009 թվականի N 1111-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 13-րդ հոդվածներով, ինչպես նաև դիվանագիտական կադրերի պատրաստման և վերապատրաստման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը***որոշում է.***

1. Հիմնադրել «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագիտականդպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցի (այսուհետ՝ դպրոց) կառավարման, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» և «ե» կետերով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը:

3. Սահմանել, որ դպրոցի գործունեության առարկան և նպատակներն են՝

1) դիվանագետների, պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատողների վերապատրաստումը.

2) դիվանագիտական կադրերի պատրաստումը՝ բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հատուկ մասնագիտական գիտելիք տրամադրելու միջոցով.

3) միջազգային հարաբերությունների ոլորտում միջազգային գիտակրթական համագործակցությանը մասնակցությունը.

4) այլ ուսումնական ծրագրերի իրականացումը:

4. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում՝

1) հաստատել դպրոցի կանոնադրությունը.

2) մինչև դպրոցի՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալը, ինչպես նաև դպրոցի կանոնադրությամբ նախատեսված կարգով դպրոցի կառավարման խորհրդի ձևավորումը և տնօրենի նշանակումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 1-ի N 1245-Ն որոշման N 1 հավելվածի 8-րդ կետի «ժէ» ենթակետով՝ հաստատել դպրոցի՝ դիվանագիտական կադրերի պատրաստման նպատակով դասընթացների ընդունելության կարգը և հայտարարել մրցույթ:

5. Սահմանել, որ՝

1) «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Երևանի Հանրապետության հրապարակի Կառավարական 2-րդ շենքի 1-ին հարկում գտնվող՝ 186.56 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածքը հետ վերցնել և անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել դպրոցին՝ համաձայն հավելվածի.

2) չի թույլատրվում նշված տարածքը կամ դրա մասը վարձակալությամբ տրամադրել:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2009 թ. հոկտեմբերի 1
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
սեպտեմբերի 23-ի N 1111-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**